**Ձև N 5.5.1**

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 183**

*հերթական համարը*

*Նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների վերաբերյալ (ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությանը)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքը (Նոր Երզնկա բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

| *Մարզ, համայնքը, բնակավայրը Հողամաս(եր)ի մակերես(ներ)ը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը* | *Փոփոխությունից հետո հողամաս(եր)ի նպատակային և գործառնական նշանակություն(ներ)ը* | *Փոփոխությունից հետո հարկայնությունը/հապավումն ըստ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման N 2 հավելվածի կառուցապատման չափորոշիչների աղյուսակի, հապավմանը համապատասխան չափորոշիչները (կառուցապատման տոկոսը, կանաչապատման տոկոսը, կառուցապատման խտությունը)* |
|---|---|---|
| *ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնք (Նոր Երզնկա բնակավայր)*<br><br>*07-050-0134-0020 կադաստրային ծածկագրով 0.05 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության /խաղող/ հողեր* | *07-050-0134-0020 կադաստրային ծածկագրով 0.05 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր* | *Համաձայն Կոտայք-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի* |

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | | **Ե. Վարդանյան** |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | **Լ. Առաքելյան** |

Երևան, «20» «մարտի» 2026թ.

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գրությամբ ներկայացված պայմանները (կցվում է):

4. Աշտարակ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Աշտարակ համայնքի (Նոր Երզնկա բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

5. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի (Նոր Երզնկա բնակավայրը) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները: